



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Երևանի պետական համալսարանի ռեկտոր,
պատմական գիտությունների դոկտոր

Հ.Վ. Հովհաննիսյան

«___» Մայիս 2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Հայկ Գևորգի Բաբայանի

**Ը.00.03՝ - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար
ներկայացված**

**«Հ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի
կարգավորման հիմնախնդիրները»
թեմայով ատենախոսության վերաբերյալ**

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման
ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի 2026 թվականի մայիսի 15-ին կայացած
նիստում: Նիստին ներկա էին ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի ժամանակավոր
պաշտոնակատար տ.գ.թ., դոցենտ Գ.Է. Սահակյանը (նախագահող), տ.գ.թ., դոցենտ Թ.Ս.
Հովակիմյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Է. Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Թ.Ս. Հովակիմյանը,
տ.գ.թ., ասիստենտ Հ.Հ. Դովլաթյանը, տ.գ.թ., դոցենտ Ս.Ս. Նահապետյանը, տ.գ.թ.,
ասիստենտ Լ.Հ. Կարապետյանը, նիստի քարտուղար Կ.Ա. Սարյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ատենախոսության թեման արդիական է և կարևոր՝ պայմանավորված ֆինանսական
համակարգի թվայնացման, ֆինանսական միջնորդների գործունեության բարդացման,
ինչպես նաև ֆինանսական կայունության ապահովման համատեքստում ներքին
հսկողության համակարգերի դերի շարունակական աճով: Ժամանակակից պայմաններում
վարկային կազմակերպությունների գործունեությունը ենթարկվում է բազմաբնույթ
ոլիսկերի՝ ֆինանսական, գործառնական, տեխնոլոգիական և իրավական, ինչի
արդյունքում արդյունավետ ներքին հսկողության համակարգերի ձևավորումը դառնում է
առանցքային խնդիր:

Ատենախոսությունում հիմնավորված է, որ Հայաստանի Հանրապետության վարկային կազմակերպություններում գործող վերահսկողական մեխանիզմները հաճախ չեն համապատասխանում ժամանակակից ֆինանսական միջավայրի պահանջներին և միջազգային լավագույն փորձին: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն ունի արհեստական բանականության և մեքենայական ուսուցման տարրերի կիրառումը վերահսկողական գործընթացներում, ինչը հնարավորություն է տալիս բարձրացնել վերահսկողության արդյունավետությունը և ռիսկերի կանխարգելման մակարդակը:

Աշխատանքն ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն և կարող է օգտակար լինել ՀՀ ԿԲ-ի, վարկային կազմակերպությունների, ներքին աուդիտի ստորաբաժանումների և ֆինանսական վերահսկողության ոլորտի մասնագետների համար:

Հետազոտության նպատակը ու խնդիրները

Հետազոտության նպատակն է բացահայտել ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգերում առկա խնդիրները, թերությունները և մշակել կատարելագործման ուղիներ:

Հետազոտության նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- իրականացնել վարկային ինստիտուտների միջազգային փորձի, ինչպես զարգացած երկրներում, այնպես էլ ՀՀ ֆինանսական համակարգին մոտ գտնվող Եվրասիական տնտեսական միության երկրների համեմատական վերլուծություն,
- ուսումնասիրել վարկային կազմակերպություններում ներքին հսկողության միջազգային փորձի կիրառվող մոտեցումները և բացահայտել ՀՀ վարկային կազմակերպություններում այդ գործընթացում առկա հիմնախնդիրները,
- բացահայտել ՀՀ վարկային կազմակերպությունների ֆինանսական կառավարման խնդիրները ընդհանուր վերահսկողության համատեքստում և տալ համապատասխան լուծման ուղիներ,
- արհեստական բանականության կիրառմամբ իրականացնել վարկային կազմակերպությունների ակտիվների նախընտրելի կառուցվածքի որոշում և առաջարկել ակտիվների կառուցվածքի վերակառուցման մոդելային լուծումներ,
- արհեստական բանականության գործիքներով կառուցված մոդելներով իրականացնել ներքին հսկողության գործառնական նպատակի բարելավում,
- մշակել վարկային կազմակերպությունների ներքին աուդիտի ռիսկերի պլանավորման վրա հիմնված վերահսկողության մոտեցում:

Հեղափոխության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում գործող վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգերն են և գործունեության ֆինանսական արդյունքների ու կարգավորման օրենսդրական դաշտը: Հետազոտության առարկան ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի կատարելագործմանը միտված հիմնախնդիրներն են:

Հիմնական գիտական արդյունքները և հեղափոխության նորույթը

Ատենախոսության ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում առանձնացվել են հետևյալ գիտական նորույթները.

- Կատարված ուսումնասիրությունների արդյունքում մշակվել են վարկային կազմակերպությունների ներքին հսկողության կանոնակարգման նվազագույն պայմաններ, որոնք միտված կլինեն ներքին հսկողության համակարգի բարձր ռիսկայնության նվազեցմանը:
- ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի համալիր ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնախնդիրներ՝ կապված օրենսդրական համապատասխանության, կորպորատիվ կառավարման և ներքին հսկողության մեխանիզմների հետ, ինչպես նաև առաջարկվել են վերջիններիս լուծման ուղիներ:
- Ֆինանսական ցուցանիշների ուսումնասիրության արդյունքում կառուցվել են ակտիվների արդյունավետ հսկողության երկու մոդելներ:
 - ✓ առաջին մոդելով հնարավորություն է ընձեռնվում վարկային կազմակերպություններում առավել արդյունավետ վերահսկել ֆինանսական ռեսուրսները: Ներքին հսկողության տեսանկյունից մոդելը հնարավորություն է ընձեռնում վերահսկողներին, սեփականատերերին, գործադիր մարմնին կարծիք կազմելու արդյոք ընկերության գործունեությունը համապատասխանում է օրենսդրական և բիզնեսի ռազմավարական պահանջներին:
 - ✓ երկրորդ մոդելով ստացվում են ակտիվների կառուցվածքի տարաբնույթ սցենարային լուծումներ, ինչը կարևոր նշանակություն ունի ռազմավարական խնդիրներ առաջադրելու և արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար:
- Մշակվել է ներքին աուդիտի ռիսկի գնահատման ցուցանիշների համակարգ տասներկու գործակցով, որը միտված է ներքին հսկողության արդյունավետության բարձրացմանը և ռիսկերի նվազեցմանը:

Հեղազրության ծավալը և կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքը շարադրված է մեքենագիր 132 էջի վրա՝ առանց հավելվածների (հավելվածներով՝ 154 էջ), պարունակում է 25 աղյուսակ, 6 գծապատկեր, 136 անուն օգտագործված գրականության ցանկ:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորված ներկայացվում է թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակը և խնդիրները, սահմանվում են ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, ներկայացվում են աշխատանքի տեսամեթոդաբանական հիմքերը, տեղեկատվական բազան, ինչպես նաև հետազոտության գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը: Հեղինակը հիմնավորում է ներքին հսկողության համակարգերի կարևորությունը ֆինանսական կայունության, ռիսկերի կառավարման և վարկային կազմակերպությունների արդյունավետ գործունեության համատեքստում:

Ատենախոսության առաջին՝ «Վարկային կազմակերպությունների դերը տնտեսության զարգացման գործում և դրանցում կիրառվող ներքին հսկողության մոտեցումները» գլխում իրականացվել է վարկային կազմակերպությունների տնտեսական նշանակության, ֆինանսական համակարգում դրանց դերի և գործունեության առանձնահատկությունների ուսումնասիրություն: Հեղինակը դիտարկել է ֆինանսական միջնորդության էությունը, վարկային կազմակերպությունների զարգացման միտումները, ինչպես նաև ներկայացրել է ներքին հսկողության համակարգերի տեսական հիմքերը և միջազգային փորձը: Ուսումնասիրվել են վերահսկողական մեխանիզմների, կորպորատիվ կառավարման, ներքին աուդիտի և ռիսկերի կառավարման փոխկապակցվածությունը՝ առանձնացնելով ժամանակակից ֆինանսական միջավայրում դրանց նշանակությունը:

Երկրորդ գլխում իրականացվել է Հայաստանի Հանրապետության վարկային կազմակերպությունների գործունեության և ներքին հսկողության համակարգերի համապարփակ վերլուծություն: Մասնավորապես ուսումնասիրվել են վարկային կազմակերպությունների ակտիվների, կապիտալի, ֆինանսական ցուցանիշների և կառուցվածքային փոփոխությունների դինամիկան: Հեղինակը գնահատել է ներքին վերահսկողության համակարգերում առկա խնդիրները, օրենսդրական համապատասխանության, վերահսկողական մեխանիզմների արդյունավետության և ֆինանսական կառավարման առանձնահատկությունների տեսանկյունից: Նույն գլխում ներկայացված են նաև վերլուծական աղյուսակներ, համեմատական գնահատումներ և ֆինանսական ցուցանիշների ուսումնասիրություններ, որոնք հնարավորություն են տալիս բացահայտել ոլորտում առկա հիմնական ռիսկերը և կառավարման թերությունները:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի կատարելագործման ուղիները» գլխում ներկայացվել են հեղինակի կողմից առաջարկվող մոտեցումները և մոդելները՝ ուղղված ներքին հսկողության համակարգի արդյունավետության բարձրացմանը: Հեղինակը մշակել է ակտիվների կառավարման մոդելներ, կիրառել արհեստական բանականության տարրեր և ներկայացրել ռիսկահեն ներքին աուդիտի ցուցանիշների համակարգ: Առանձնակի ուշադրություն է դարձվել ներքին վերահսկողության գործառնական արդյունավետության բարձրացմանը, ֆինանսական ռիսկերի նվազեցմանը և վերահսկողական գործընթացների ավտոմատացման հնարավորություններին: Աշխատանքում փորձ է արվել համադրել ֆինանսական վերահսկողության դասական մոտեցումները և ժամանակակից թվային տեխնոլոգիաները՝ ձևավորելով կիրառական նշանակություն ունեցող առաջարկություններ:

Ատենախոսության եզրափակիչ հատվածում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, ձևակերպվել են համապատասխան եզրակացություններ և գործնական առաջարկություններ: Հեղինակը ներկայացրել է վարկային կազմակերպությունների ներքին վերահսկողության համակարգերի կատարելագործմանն ուղղված մի շարք մոտեցումներ, որոնք կարող են կիրառական նշանակություն ունենալ ինչպես ֆինանսական կազմակերպությունների, այնպես էլ ոլորտը կարգավորող կառույցների համար:

Դիտողություններ արենախոսության վերաբերյալ

Ատենախոսության գիտական և կիրառական արժեքը չնվազեցնելով՝ նպատակահարմար ենք համարում նշել հետևյալ դիտողությունները.

1. Վարկային կազմակերպությունների տիպի (ձևի) արձանագրման բացակայություն
Աշխատանքում նշված չէ, թե համաձայն ՀՀ օրենսդրության որոնք են համարվում վարկային կազմակերպությունների տիպերը (խմբերը), չի ներկայացվել նաև գործող վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշների դինամիկան վերջին տարիներին:
2. Վարկային կազմակերպության կորպորատիվ կառավարման ներդրման հարցեր
Ցանկալի կլիներ քննարկել վարկային կազմակերպություններում կորպորատիվ կառավարման ներդրման հարցերը, բանկերի համար սահմանված իրավական կարգավորումների ներդրման հնարավորություններն այս ոլորտում, ինչպես նաև բանկերում ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանների (ԿԲ կանոնակարգ 4) կիրառման հնարավորությունները վարկային կազմակերպություններում:
3. Արհեստական բանականության կիրառման մեթոդաբանական հիմնավորման սահմանափակությունը
Ատենախոսությունում կիրառվում են արհեստական բանականության և մեքենայական ուսուցման (machine learning) տարրեր, սակայն բավարար չափով ներկայացված չեն

կիրառված ալգորիթմների կառուցվածքը, ուսուցման մեթոդաբանությունը, տվյալների մշակման սկզբունքները և մոդելների վավերացման գործընթացը: Արդյունքում ամբողջությամբ հստակ չէ առաջարկվող մոդելների կանխատեսվող կայունությունն ու գործնական արդյունավետությունը տարբեր շուկայական պայմաններում:

4. Էմպիրիկ վերլուծության և մոդելների վավերացման սահմանափակությունը

Ատենախոսությունում ներկայացված մոդելների արդյունավետությունը հիմնականում գնահատվում է արդեն հայտնի ֆինանսական ցուցանիշների հիման վրա, սակայն բացակայում են բավարար ընտրանքից դուրս («out-of-sample») փորձարկումներ, կայունության վերլուծություն («robustness analysis») և սթրես-թեստավորման մեխանիզմներ: Այդ հանգամանքը սահմանափակում է առաջարկվող մոտեցումների կիրառելիության ամբողջական գնահատումը բարձր ռիսկային կամ ճգնաժամային իրավիճակներում:

5. Տվյալների ընտրանքի և ներկայացուցչականության հիմնավորման սահմանափակությունը

Ատենախոսությունում օգտագործված ֆինանսական տվյալների ընտրանքի ներկայացուցչականության, համադրելիության և երկարաժամկետ կիրառելիության վերաբերյալ բավարար հիմնավորումներ չեն ներկայացվել, ինչը որոշ չափով սահմանափակում է ստացված արդյունքների ընդհանրացման հնարավորությունը ֆինանսական համակարգի ամբողջ հատվածի նկատմամբ:

6. Առաջարկվող մոդելների ներդրման գործնական մեխանիզմների ոչ ամբողջական ներկայացումը

Ատենախոսությունում ներկայացված մի շարք առաջարկություններ ունեն գործնական հետաքրքրություն, սակայն դրանց ներդրման փուլային ընթացակարգերը, պատասխանատու կառույցների դերաբաշխումը և վերահսկողական KPI-ների համակարգը ներկայացված չեն բավարար չափով, ինչը որոշ չափով սահմանափակում է առաջարկվող մոտեցումների անմիջական կիրառելիությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայկ Գևորգի Բաբայանի «ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի կարգավորման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն կատարված, գիտական և կիրառական արժեք ներկայացնող հետազոտություն է, որտեղ ուսումնասիրված են արդիական խնդիրներ, առաջարկվել են որոշակի նորարարական մոտեցումներ և ձևակերպվել են գործնական նշանակություն ունեցող առաջարկություններ, որոնք կարող են նպաստել ՀՀ վարկային կազմակերպություններում ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի արդյունավետության բարձրացմանը, վերահսկողական մեխանիզմների կատարելագործմանը և ֆինանսական կայունության ապահովման գործիքների զարգացմանը:


Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի տպագրված 6 գիտական հոդվածներում: Հոդվածները ներկայացված են սեղմագրում:

Սեղմագիրը կազմված է ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներով և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը, արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Հետևաբար, Հայկ Գևորգի Բաբայանի «**ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի կարգավորման հիմնախնդիրները**» թեմայով ատենախոսությունը բավարարում է Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակը՝ **Հայկ Գևորգի Բաբայանը** արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի 15.05.2026թ.-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 10):

**ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման
Ֆակուլտետի Ֆինանսահաշվային
ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.**

 **Ս.Ա. Նահապետյան**

**ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման
Ֆակուլտետի Ֆինանսահաշվային
ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.**

 **Թ.Ա. Հովակիմյան**

**ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման
Ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի
վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., դոցենտ՝**

 **Գ.Է. Սահակյան**

**Գ.Է. Սահակյանի, Ս.Ա. Նահապետյանի և Թ.Ա. Հովակիմյանի ստորագրությունները
հաստատում են՝**

**ԵՊՀ գիտական քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝**

Մ. Հ. Հովհաննիսյան

19.05.26թ.

